մականուամբ բժշկին հետ, յանձնարարական նամակ մի տուաւ ինձ առ իւր եղբայրը. որ կալուածատէր էր Փրոսքուրովէ 'ի Կամենից ճանապարհին վրայ։

Երկաթուղոյ կայարանէն կառք մի վարձեցի մինչև Սթանքեչի գիւղը, որ 15 վերստ էր, և երկու ժամէն հասայ հոն։ Շնորհակալութիւն մեծ՝ հիւրընկալ պարոնին, որոյ մարդասէր ասպընկալականութիւնը վայելելով, գիշերս հոն անցընելէն վերջը, վաղ առաւօտու ճամբայ ելայ։ Օդն բարեխառն և քաղցր կը շնչէր, ցորենաչատ դաշտերն հնձուած, այլ տակաւին որաներն բարդ բարդ, դէզ դէզ դաշտաց վրայ էին։

Այն Փոտոլիա կամ Ուքրայինա կոչուած աշխարհին մէջն էի, զոր տեղացի Փոքր-Ռուս Թարաս Շեւչենքոյ քերդողն՝ զանազան գողտրիկ տողերով երգած և գովասանած է. այն հացաշատ և ջրարբի աշխարհն, որ համբարանոց է արեւմտեան Ռուսիոյ, բաց կեցած էր առաջս. այս այն աշխարհն էր՝ որոյ ծոցը՝ ըստ քերդողին դղրչալով կը խայտայ ալեւորն Տներեր։ Առաջ կ'երթայի՝ լայն ծառազարդ ճանապարհին վրայէն, որոյ վրայ հովանի կ'առնէին մեծամեծ բարտի, նշդարի, կակղի և հաստաբուն կեռասի ծառեր։ Դաշտին մշակների նոյն պուետին Շեւչենքոյի երգած «գռուզ մազերով Քոզաքներն» էին, «մրայոն և սեւաչեայ Քոզաքուհիք», ցորենի որաները բեռնաւորած սայլերու վրայ 'ի կալ՝ կասելու կը տանէին։ Ճանապարհին վրայ մարդաչատ գեղեր, բարեկարգ անտառներ՝ մերթ ընդ մերթ իրարու կը յաջորդէին, պտղատու պարտէզներ առատ մեծամեծ խնձորներով և տանձերով և այլ պտղոք. փորձեցի այդ պտուղներուն համը, այլ